



«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«ՆՈՐ ԶՈՎՔ» ՍՊԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՓԱԿՎԱԾ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՆԻՍ-2021թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Հաճախարչի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ



ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն, 10 փող, տուն 6

ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1

Հեռ: (010) 57 28 46

ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,

ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄԻՏ -02.08.2006թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱԾՎԱԳԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Նոր Զուլք» սահմանափակ
պատասխանատվության ընկերության մասնակցին*

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նոր Զուլք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (այսուհետ ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք որպես աուդիտորներ նշանակվել ենք 2020թվականի դեկտեմբերի 31-ից հետո միայն, ուստի չենք հետևել պաշարների գույքագրմանը այդ տարվա սկզբի և վերջի դրությամբ: Աուդիտի ընթացքում Ընկերության գործունեության առանձնահատկությունով պայմանավորված մեր կողմից այլընտրանքային միջոցներ են կիրառվել միայն որոշակի անվանումներով պաշարների նկատմամբ, հետևաբար չենք կարողացել այլընտրանքային միջոցների կիրառմամբ լիարժեքորեն համոզվել 2019 և 2020 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա պաշարների վերաբերյալ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված են համապատասխանաբար 2 534 212 հազար դրամ և 2 639 748 հազար գումարով: Արդյունքում մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլինեին կատարել պաշարների արտացոլված կամ չարտացոլված գումարների ճշգրտումներ, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության տարրերի ճշգրտումներ:

Ընկերության ունեցած կրեդիտորական պարտքերը 2019 և 2020 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված են համապատասխանաբար 4 120 016 հազար դրամ և 4 216 559 հազար գումարով: Մեր կողմից Ընկերության կրեդիտորներից ստացված արտաքին հաստատումներով ձեռք են բերվել ապացույցներ 31.12.2020թ դրությամբ առկա 467 802 հազար դրամի կրեդիտորական պարտքերի վերաբերյալ: Մնացած կրեդիտորներից աուդիտորական եզրակացության կազմման օրվա դրությամբ հաստատումների նամակների պատասխանները դեռ չէին ստացվել: Մենք առաջնորդվել ենք կրեդիտորական պարտքերի մի մասի ստուգման այլընտրանքային տարբերակով: Արդյունքում մենք չենք կարողացել որոշել՝ արդյոք անհրաժեշտ կլինեին կատարել մնացյալ կրեդիտորական պարտքի արտացոլված կամ չարտացոլված գումարների ճշգրտումներ, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության տարրերի ճշգրտումներ:

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության

«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիրը) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

2019թ ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել, ուստի մենք հիմք ենք ընդունել Ընկերության կողմից տրամադրված հաշվապահական տեղեկատվությունը: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Ընկերության 2019թ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, այդ պատճառով մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Ընկերության 2019թ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք: Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ՀՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ՀՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- ✚ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✚ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ✚ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✚ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի

✚ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

✚ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

29 հունիսի 2021թ.

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր



Մ. Ունենյան
Ա. Մխիթարյան



**Ֆինանսական փինակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ	4	546 666	346 131
Հիմնական միջոցներ	10	13 303	11 203
Հետաձգված հարկային ակտիվներ		559 969	357 334
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ	5	2 639 748	2534212
Պաշարներ	6	261 509	128 820
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	767 176	660 279
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		3 668 433	3 323 311
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		4 228 402	3 680 645
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ			
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	8	62	62
Համալրված բաժնետիրական կապիտալ		(342 951)	(626 313)
Զբաղիված շահույթ (չձածկված վնաս)		(342 889)	(626 251)
Ընդամենը սեփական կապիտալ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ	9	-	-
Վարկեր և փոխառություններ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ	9	174 400	48 609
Վարկեր և փոխառություններ	11	4 322 988	4 196 046
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	73 903	62 241
Պահուստներ		4 571 291	4 306 896
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		4 228 402	3 680 645
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			



Տնօրեն
Գլխավոր հաշվապահ

Ռ. Ալիխանով
Ս. Սարգսյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 24-ին: Ֆինանսական փինակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-23)

**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ճարունակվող գործունեություն			
Հասույթ	13	37 362 699	32 390 849
Վաճառքի ինքնարժեք	13	(33 001 820)	(29 611 820)
Համախառն շահույթ (վնաս)		4 360 879	2 779 029
Իրացման ծախսեր	14	(3 121 752)	(2 172 379)
Վարչական ծախսեր	15	(580 421)	(393 928)
Այլ եկամուտ	16	37 015	10 253
Այլ ծախսեր	16	(337 687)	(85 894)
Այլ օգուտ (կորուստ)	17	(2 113)	2 083
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		355 921	139 164
Շահութահարկի գծով ծախս	18	(72 559)	(16 804)
Ճարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		283 362	122 360
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		283 362	122 360



Ռ. Ալիխանով

Ս. Սարգսյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-23)

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ

	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ (չձածկված վնաս)	Ընդամենը
2019թ հունվարի 1-ի դրությամբ	62	(748 673)	(748 611)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	122 360	122 360
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-
2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	62	(626 313)	(626 251)
2020թ հունվարի 1-ի դրությամբ	62	(626 313)	(626 251)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	283 362	283 362
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	62	(342 951)	(342 889)



Ռ. Ալիխանով

Ս. Սարգսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-23)

**Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ

	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	660 279	787 873
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	43 761 770	38 022 449
Այլ մուտքեր	-	154
Աշխատակիցներին և նրանց անունից վճարված դրամական միջոցներ	(1 831 788)	(1 544 153)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(41 053 489)	(35 262 263)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ	(388 793)	(896 365)
Այլ վճարումներ	(122 697)	(369 143)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	365 003	(49 321)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտք	(376 633)	(97 972)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(376 633)	(97 972)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	172 000	50 000
Վարկերի և փոխառությունների մարումներ	(46 817)	(30 886)
Վճարված շահաբաժիններ	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	125 183	19 114
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ած	113 553	(128 179)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցներին և դրանց համարժեքների վրա	(6 656)	585
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	767 176	660 279



Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Ռ. Ալիխանով

Ս. Սարգսյան

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (ԼՃ 9-23)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Ընկերության մասին

«Նոր Չովք» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը, (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2001թ: Ընկերության կանոնադրությունը գրանցվել է 28.03.2001թվականին, գրանցման թիվ 286.110.04176: Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց, թիվ 71:

Ընկերության կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը և Ընկերության տնօրենը: 2020թ Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 1209 մարդ, իսկ 2019թ՝ 1009 մարդ:

1.2 Հիմնական գործունեությունը

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է հանդիսանում պարենային և ոչ պարենային ապրանքների մանրածախ առևտուրը առևտրային ցանցի միջոցով:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերոտության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Ընկերության մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, քաջառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

Ընկեր, շինություններ

20-40 տարի

Սարքավորումներ

8-10 տարի

Արտադրական և տնտեսական գույք

5-8 տարի

Հաշվողական և համակարգչային տեխնիկա

1-5 տարի

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր

3-10 տարի

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

3.3 Ներդրումային գույք

Ընկերությունը ներդրումային գույքը սկզբնական ճանաչման պահին պետք է չափի իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում, օրինակ՝ իրավաբանական և բրոքերային ծառայությունների դիմաց վճարները, գույքի փոխանցման գծով հարկերը, ինչպես նաև գործարքի հետ կապված այլ ծախսումներ: Եթե վճարումը վճարման սովորական պայմաններում նախատեսված ժամկետներից հետաձգվում է, ինքնարժեքը ապագա բոլոր վճարումների ներկա արժեքն է:

Ներդրումային գույքը, որի իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է չափվի իրական արժեքով՝ իրական արժեքում փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում: Ընկերությունը բոլոր այլ ներդրումային գույքը պետք է հաշվառի որպես հիմնական միջոց՝ կիրառելով ինքնարժեք-մաշվածություն-արժեզրկում մոդելը:

3.3 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.4 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է առաջին մուտք՝ առաջին ելք ԱՄՆԵ բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

3.6 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.7 Հատույթ

Ընկերությունը պետք է ճանաչի հատույթ, երբ (կամ այնքանով, որքանով) կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ (կամ այնքանով, որքանով) գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ (կամ այնքանով, որքանով) կատարման պարտականությունը կատարվում է, Ընկերությունը պետք է ճանաչի որպես հատույթ՝ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը: Գործարքի գինը որոշելիս՝ Ընկերությունը պետք է դիտարկի պայմանագրի պայմանները և իր սովորական բիզնես գործելակերպը: Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անունից հավաքագրված գումարները:

3.8 Զնորհներ

Զնորհը չի ճանաչվում, քանի դեռ կա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից պայմանները և, որ շնորհը ստացվելու է:

Զնորհները ճանաչվում են որպես եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Զնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Ընկերությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ընկերության ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը պետք է առևտրական դերիտորական պարտքերը չափի իրենց գործարքի գնով (ինչպես դա սահմանված է ՖՀՄՍ 15-ով), եթե դերիտորական պարտքերը չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ:

Բացառությամբ առևտրական դերիտորական պարտքերի, սկզբնական ճանաչման պահին պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը պետք է ֆինանսական ակտիվը համապատասխան չափի՝

ա) ամորտիզացված արժեքով.

բ) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով.

գ) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ընկերությունը պետք է դասակարգի բոլոր ֆինանսական պարտավորությունները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորությունների: Ընկերությունը պետք է արժեզրկման պահանջները կիրառի այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, և այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Ընկերությունը պետք է ճանաչի կորստի պահուստ ֆինանսական ակտիվի ակնկալվող պարտքային կորուստների գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:

Ընկերությունը շահույթում կամ վնասում, որպես արժեզրկումից օգուտ կամ կորուստ, պետք է ճանաչի ակնկալվող պարտքային կորուստների (կամ դրանց հակադարձումների) այն գումարը, որն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետու ամսաթվի դրությամբ կորստի պահուստը ճշգրտվի մինչև այն գումարը, որը պահանջվում է ճանաչել սույն ստանդարտին համապատասխան:

3.10 Վարձակալություններ

Պայմանագրի սկզբում Ընկերությունը պետք է գնահատի արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Վարձակալության *մեկնարկի ամսաթվի* դրությամբ, վարձակալը պետք է ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով: Մեկնարկի ամսաթվին վարձակալը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է գեղջվեն կիրառելով *վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը*, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի *վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը*:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության տոկոսը,

բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար կատարված վարձավճարները, և

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը՝ կիրառելով սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդելը, եթե վարձակալը չի կիրառում վերևի պարբերությամբ չափման մոդելը:

Վարձատուրն պետք է իր վարձակալություններից յուրաքանչյուրը դասակարգի կամ որպես *գործառնական վարձակալություն* կամ որպես *ֆինանսական վարձակալություն*:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, եթե փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական, եթե չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Վարձատուրն գործառնական վարձակալությունից ստացվող վարձավճարները պետք է ճանաչի որպես եկամուտ կամ գծային հիմունքով, կամ մեկ այլ պարբերական հիմունքով:

3.11 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Չեղյման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն ընթացիկ լավագույն գնահատա-կանը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

4. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Ծենքեր, շինություններ, կառուցվածքներ, հողամասեր	Մեքենա - սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք, արտադրական գույք, այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
2019թ հունվարի 1-ի դրությամբ	19 923	338 397	4 184	45 637	408 141
Ավելացումներ, ներքին շարժ	3 942	162 018	194	29 015	195 169
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	(295)	-	-	(295)
2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	23 865	500 120	4 378	74 652	603 015
2020թ հունվարի 1-ի դրությամբ	23 865	500 120	4 378	74 652	603 015
Ավելացումներ, ներքին շարժ	97 118	222 304	9 419	44 460	373 301
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	-	-	-	-
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	120 983	722 424	13 797	119 112	976 316
Կուտակված մաշվածություն					
2019թ հունվարի 1-ի դրությամբ	1 681	109 183	770	30 001	141 635
Տարվա ծախս	1 676	104 770	1 039	7 764	115 249
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	-
2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	3 357	213 953	1 809	37 765	256 884
2020թ հունվարի 1-ի դրությամբ	3 357	213 953	1 809	37 765	256 884
Տարվա ծախս, ներքին շարժ	3 289	151 229	979	17 269	172 766
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	-	-	-	-
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	6 646	365 182	2 788	55 034	429 650
Զուտ հաշվեկշռային արժեք					
2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	20 508	286 167	2 569	36 887	346 131
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	114 337	357 242	11 009	64 078	546 666

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հաշվառում է 153 808 հազար դրամի սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնց մնացորդային արժեքը զրո է: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 24 903 հազար դրամ:

5. Պաշարներ

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ մանրածախ առևտրում	2 639 748	2 534 212
Այլ	-	-
	2 639 748	2 534 212

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	159 456	86 874
Դեբիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով	356	140
Տրված ընթացիկ կանխավճարներ	101 697	1 697
Դեբիտորական պարտքեր բյուջեին շահութահարկի գծով	-	17 299
Դեբիտորական պարտքեր բյուջեին ԱԱՀ գծով	-	161
Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր	-	22 649
	261 509	128 820

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	55 071	49 167
Դրամական միջոցներ վճարային տերմինալների հաշիվներում	231 430	138 166
Դրամական միջոցներ ճանապարհին	148 990	55 000
Կանխիկ դրամը դրամարկղում	331 685	417 946
	767 176	660 279

8. Մեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 62 000 դրամ, որը բաժանված է 62 բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Այն ամբողջությամբ տեղաբաշխված է, լրիվ վճարված է և պատկանում է Ընկերության հիմնադիրին (միակ մասնակից) Արամ Արամյանին:

Պահուստային կապիտալ

Ընկերությունը կուտակված շահույթի հաշվին պետք է ստեղծի պահուստային կապիտալ, որը կարգավորված է Ընկերության կանոնադրությամբ: Այն օգտագործվելու է վնասների ծածկման, շահաբաժինների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակներով:

2020թ դեկտեմբերի 31-ի և 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահուստային կապիտալի չի ձևավորել:

Շահաբաժիններ

Ընկերությունը 2020թ և 2019թ վականի համար հայտարարվել շահաբաժին չի հայտարարվել:

9 Փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կարճաժամկետ վարկեր	-	46 209
Հիմնադիրից ստացված անտոկոս կարճաժամկետ փոխառություններ	174 400	2 400
	174 400	48 609

10. Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

Հազար ՀՀ դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Զուտ հետաձգված հարկ	
	2020թ	2019թ	2020թ	2019թ	2020թ	2019թ
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	13 303	11 203	-	-	13 303	11 203
	13 303	11 203	-	-	13 303	11 203

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հազար ՀՀ դրամ	2019թ հունվարի 1-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ		11 203	11 203	2 100	13 303
Զուտ հետաձգված հարկ	-	11 203	11 203	2 100	13 303

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	4 216 559	4 120 016
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ պարտքերում ընդգրկված ֆինանսական պարտավորություններ	4 216 559	4 120 016
Ստացված կանխավճարներ	4 775	4 795
Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով	30 468	35 298
Հատուցումներ աշխատակիցներին	2 234	282
Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով	21 437	18 302
Կրեդիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով	46 597	17 264
Այլ կրեդիտորական պարտք	918	89
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4 322 988	4 196 046

Ընկերության կրեդիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2020թ կազմել է 46 օր, իսկ 2019թ` 51 օր:

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Հարկերի և պարտադիր վճարների գծով կրեդիտորական պարտքը բաղկացած է հետևյալից`

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկ	28 755	-
Եկամտային հարկ	-	27 982
Ավելացված արժեքի հարկ	681	3 260
Հողի հարկ	-	-
Գույքահարկ	-	-
Այլ	1 032	4 056
Ընդամենը	30 468	35 298

12. Պահուստներ

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	73 903	62 241
	73 903	62 241

13. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ

Հազար ՀՀ դրամ

Ապրանքների վաճառքից հասույթ
Ծառայություն. մատուցումից հասույթ

2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
36 664 271	31 812 865
698 428	577 984
37 362 699	32 390 849

Վաճառքի ինքնարժեք

Հազար ՀՀ դրամ

Ապրանքների վաճառքից

2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
33 001 820	29 611 820
33 001 820	29 611 820

14 Իրացման ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Աշխատավարձ
Հիմ.միջ.մաշվածություն,դրանց նորոգման և
սպաս.ծախսեր
Արտադ.ապրանք.իրացման տրանսպորտ.և
ապահովագր.ծախսեր
Մարկետինգի և գովազդի ծախսեր
Գրասենյակային,կոմունալ
Վարձակալության գծով ծախսեր
Իրացման այլ ծախսեր

2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
1 622 609	1 471 140
172 766	115 249
79 414	78 015
5 097	2 714
317 558	181 077
554 219	257 036
370 089	67 148
3 121 752	2 172 379

15. Վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Աշխատավարձ
Գործուղման և ներկայացուցչական
Փոստի,հեռահաղորդակցության
Հաշվապահական և խորհրդատվական
ծախսեր
Բանկային ծառայության ծախսեր
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր
Այլ

2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
113 992	82 526
-	2 732
3 482	764
3 100	2 400
110 051	70 944
253 052	178 781
96 744	55 781
580 421	393 928

16. Այլ եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անհատույց ստացումներից եկամուտ	7 085	4 431
Այլ եկամուտներ	29 930	5 822
	37 015	10 253

Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	-	15 609
Արժեքների պակասորդներից և փչացումից կորուստներ	312 211	-
Արձակուրդային պահուստաֆոնդի գծով ծախսեր	11 662	62 241
Այլ ծախսեր	13 814	8 044
	337 687	85 894

17. Այլ օգուտ (կորուստ)

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ	8 560	2 396
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստ	(10 673)	(313)
	(2 113)	2 083

18. Ծախսեր

Ծախսերի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսերի գծով ծախս	74 659	28 007
Հետաձգված ծախսեր Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	(2 100)	(11 203)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված ծախսերի գծով ծախս / (օգուտ)	72 559	16 804

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Հաշվապահական շահույթ / (վնաս) մինչև շահութահարկով հարկումը	355 921	-	139 164	-
ՀՀ շահութահարկի պարտադիր 18% (2019թ.՝ 20%) դրույքաչափով հաշվարկված շահութահարկ (Զհարկվող)/չնվագեցվող հոդվածներ, զուտ	64 066	18	27 833	20
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	8 493	2,4	(11 029)	(8)
	72 559	20,4	16 804	12

19. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	767 176	660 279
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	159 812	87 014
Ընդամենը	926 988	747 293

Ֆինանսական պարտավորություններ

	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային այլ կրեդիտորական պարտքեր	4 216 559	4 120 016
Վարկեր և փոխառություններ	174 400	48 609

20. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել արտարժույթային ռիսկի ենթակա էական ակտիվներ և պարտավորություններ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Դեկլարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել տոկոսային ռիսկի ենթակա էական ֆինանսական գործիքներ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

Հազար ՀՀ դրամ

Հաշվեկշռային արժեք

	2020թ	2019թ
Առևտրային դեբիտորական պարտքեր	159 812	87 014
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	767 176	660 279
	926 988	747 293

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

Հազար ՀՀ դրամ

Հաշվեկշռային արժեք

	2020թ	2019թ
Տեղական	159 812	87 014
Ընդամենը	159 812	87 014

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

Հազար ՀՀ դրամ

Հաշվեկշռային արժեք

	2020թ	2019թ
Իրավաբանական անձինք և կազմակերպություններ	159 812	87 014
Ֆիզիկական անձինք	-	-
Ընդամենը	159 812	87 014

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ^ա իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

2020թ

Հազար ՀՀ դրամ

	Հաշվեկշռային արժեք	Մինչև մեկ տարի	1-2 տարի	2 տարի և ավելի
Վարկեր և փոխառություններ	174 400	174 400	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4 216 559	4 216 559	-	-
	4 390 959	4 390 959	-	-

2019թ

Հազար ՀՀ դրամ

	Հաշվեկշռային արժեք	Մինչև մեկ տարի	1-2 տարի	2 տարի և ավելի
Վարկեր և փոխառություններ	48 609	48 609	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4 120 016	4 120 016	-	-
	4 168 625	4 168 625	-	-

Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

21. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

- ✚ *Ծանոթագրություն 4 – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը*
- ✚ *Ծանոթագրություն 9 – վարկեր և փոխառություններ*
- ✚ *Ծանոթագրություն 10 – հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

Ապագայի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև գնահատման անորոշության հիմնական այլ աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում:

- ✚ *Ծանոթագրություն 22 – պայմանականություններ*

22. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությանն պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Ընկերությունը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Ընկերության գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում

հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Ընկերությունը գտնում է , որ 2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Ընկերության հարկային, արժույթային և մաքսային դրությունը կայուն է:

Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

23 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Վերահսկողություն

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում նրա միակ մասնակիցը՝ Արամ Արամյանը
Ընկերության կապակցված կողմեր են հանդիսանում են հանդիսանում նրա բաժնետերերը և Ընկերության տնօրենը: Ընկերության և նրա հետ փոխկապակցված անձանց միջև գործարքների մանրամասները բացահայտված են ստորև:

	Մնացորդը 31.12.2019թ	Գործարքի արժեքը 2020թ	Մնացորդը 31.12.2020թ
Մասնակցի հետ գործարքներ			
Ստացված փոխառություն	2 400	172 000	174 400
Վարձակալական վճարներ	3 636	305 455	27 727
Տնօրենի հետ գործարքներ			
Հաշվարկված աշխատավարձ	-	4 800	-
Վարձակալական վճարներ	1 854	22 256	1 854

24. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2020թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը՝ 24.06.2021թ տեղի չեն ունեցել:

Կորոնավիրուսային համավարակի /COVID-19/ զարգացումների մասշտաբը և տևողությունը մնում են անորոշ և դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը այս համավարակը համարում է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող իրադարձություն, որի ֆինանսական ազդեցությունը ներկայումս չի կարող գնահատվել վստահության բաղադրով մակարդակով:



Տնօրեն՝
Գլխավոր հաշվապահ՝

Ռ. Ալիխանով

Ս. Սարգսյան